## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

**ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022 թվականի կարիքների համար տնտեսական նշանակության ձեռքբերման նպատակով ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/16 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի**

21.02.2022թ. ժ. 15:00

Նիստին մասնակցում էին՝

նախագահող՝ Սարգիս Մելիքյան

անդամ՝ Արտակ Անդրեասյան, Արմեն Սահակյան

Քարտուղար՝ Աննա Չոբանյան

**1. Որպես ընտրված մասնակից պայմանագիրն ստորագրելու իրավունքից զրկելու մասին**

---

**Սարգիս Մելիքյան**

**1.1** Գնահատող հանձնաժողովի քարտուղարը անգործության ժամկետի ավարտից հետո՝ ծանուցել է Ռեբեկա Բալոյան Ռաֆիկի Ա/Ձ-ին՝ կից ներկայացնելով պայնամանագրի նախագիծը 2-րդ, 25-րդ, 33-րդ, 34-րդ, 38-րդ, 39-րդ, 53-րդ և 54-րդ չափաբաժինների մասով, առաջարկելով ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները և ստորագրված պայմանգիրը: Ծանուցումը ստանալուց հետո պայմանագրի ներկայացման վերջնաժամկետը համարվում է 17.02.2022 թվականը ներառյալ: Մինչ նշված ժամկետը լրանալը մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը և ապահովումները չի ներկայացվել: Քարտուղարը 18.02.2022 թվականին էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել է պայմանագրի ներկայացման վերջնաժամկետը լրանալու վերաբերյալ, սակայն արձագանք չի ստացվել:

**Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց՝**

Ռեբեկա Բալոյան Ռաֆիկի Ա/Ձ--ին զրկել պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, այն է՝ *«Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից»:*

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները Ռեբեկա Բալոյան Ռաֆիկի Ա/Ձ -ի տվյալները համապատասխան հիմքերով, սահմանված ժամկետում գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

**ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ**

**2. 2-րդ, 25-րդ, 33-րդ, 34-րդ, 38-րդ, 39-րդ, 53-րդ և 54-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին**

---

**Սարգիս Մելիքյան**

**Հանձնաժողովը որոշեց՝**

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի հիման վրա 2-րդ, 25-րդ, 33-րդ, 34-րդ, 38-րդ, 39-րդ, 53-րդ և 54-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած:

**ընդունվել է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ**

Հանձնաժողովի նախագահող՝ _____ Սարգիս Մելիքյան

Անդամներ՝ _____ Արտակ Անդրեասյան

_____ Արմեն Սահակյան

Քարտուղար՝ _____ Աննա Չոբանյան